

ԲԵՊԲԵՏ ԸՅՂԱԶԵԼՆԵՅ. Եւջանի Բոլոր. Էր

Կրտսէն Կեանքի. Թիֆլիս. Կոպ. Մ. Վարդապետի 1893. 8. Կոտորի. Եր. 111. Բիւն է 50 կոպ.

Այս մի փոքրիկ վէպիկ է Ի. Բ. գլխից բաղկացած, ուր նկարագրուած է Թիֆլիսի նորագոյն կեանքի մի պատկերը. Վէպիկիս պատմութիւնը շատ կարճ է. մի հայ աղնուական և հարուստ ընտանիքի զաւակ Աովկասում ուղևորութիւն արած ժամանակ Զ. գիւղաքաղաքում ծանօթանում է մի գաւառացի որր աղջկայ հետ և անմիջապէս սիրահարուած է. սիրահարութիւնը վերջանում է նշանադրեքով. իսկ ամուսնութիւնը գլուխ չի գալիս, որովհետև աղջկայ խնամակալը, նորա հօրեղբայրը, խանգարում է. Սիրահար երիտասարդը Թիֆլիզ է կանչուում իւր ծնօղներից և կշռադատելով հարստութեան առաւելութիւնները, վճռում է ամուսնանալ մի իշխանուհու հետ, որ և ապա մերժում է նրան, իսկ նախկին նշանածը կորցնելով իւր մօրըն ևս, աղքատութեան ամէն զրկանքները ծաշակում է, պատահմամբ ազատուում է բարոյական անկումից և իրըն վիպագրող անուն է հանում հայ թերթերում, որոնց միջոցով կրկին գըտնում է նրան իւր անհաւատարիմ նշանածն և ամուսնանում են. Ende gut, alles gut (երբ վերջը լաւ է, ամենայն ինչ լաւ է.) ասում է գերմանական առածը, տակայն նոյնը չէ կարելի ասել և վէպիկիս մասին. Այլադեանն արգարև ճանաչում է Թիֆլիզի աղքատ հայ հասարակութեան կեանքը, որ քանիցս իւր վէպիկներում պատկերացրել է յաջողութեամբ, նա յաջողակ է երբեմն և բնութեան ու բուն կրքերի նկարագրութեան մէջ, սակայն նրա վէպիկների ընդհանուր շարագասութիւնն (composition) միշտ տկար է. Այս վէպիկն էլ նոյն թերթութիւնն ունի, երիտասարդները ծանօթանում են հինգերորդ երեսում, վեցերորդում սիրահարուում են և եօթներորդում նշանադրեքն ու պսակ կը լինէր, եթէ չար հօրեղբայրը չը լինէր. Իրըն հոգեբանական հետազոտութիւն շատ թող է և չէ բացատրում իսկ հօրեղբօր անսահման ատելութեան պատճառները, նոյնպէս թող են և երիտասարդի հոգեկան վիճակի փոփոխութիւնների նկարագիրները. Իրական կեանքում շատ դէպքեր են տեղի ունենում, որոնց լոկ նկարագիրը դեռ վէպ չի լինիլ, վէպը պիտի մեզ հոգեկան աշխարհի երևոյթները նկարագրէ և բացատրէ. Բարու և չարի կուռի այս տեսակ նկարագիրը շատ ձևական է, եթէ այդ ձևով գրուեն վէպերը, ոչ մի հետաքրքրութիւն չեն զարթեցնել:

Բանաստեղծութեան լեզուն ևս պիտի զեղեցիկ լինի և մշակուած, մի պահանջ, որ գոյութիւն չէ ունեցել ցարգ մեր նոր հեղինակների համար. Այլադեանի փորձերից երևում են, որ նա կարող է զեղեցիկ հայերէնով գրել, եթէ մշակէ իւր լեզուն, սակայն շատ անհոգ է վերաբերուում այդ բանին, տեղ տեղ քերականական սխալներով է գրում, նոյն բաւերը կրկնում է տողում մի երկու անգամ, իսկ դերանունները հեղեղում են երեսները, օր. եր. 11. միայն 13 անգամ նա դերանունն է կրկնուած:

ԶՈՆ ԼԵԻԲՈՎ Էրբեր ամենա- քրտեր. լուր. աս- Երեմի 11. Էրբեր Եր. 13. Բիւն է 8 կոպ. Կոպ. Մ. Վարդ. 8. Եր. 13. Բիւն է 8 կոպ.

Քաղաքակրթութեան տարածման առաջին նշաններից մէկն է ընթերցանութեան տարածում, սակայն որպիսի ընթերցանութեան, Մեզ նման աղքատ գրականութիւն ունեցող ազգերի համար դեռ գոյութիւն չունի իսկապէս գրքերի ընտրութիւն ասուածը, սովորաբար կարգում են, ինչ որ տպուած է, դեռ մեծ է դէպի տպագրուած խօսքն եղած հաւատը, մեր ընթերցողներից շատ շատերը դեռ այն կարծիքի են, որ ամենայն տպագրուած բան լաւ է. Այլ է հարուստ գրականութեան տէր ազգերի բանը, այն տեղ ընտրութիւնը տանջանք է, այնքան շատ նիւթ կայ ընտրելու. Այսուամենայնիւ մի այսպիսի դասաստութեան հրատարակութիւնը օգտակար գործ է, դա ուղեցոյց կը լինի և մեր թարգմանիչների համար. Արդէս զի այս գիրքն օգտակար լինէր հայ ընթերցողներին, պէտք էր գտնէ նշանակել այն գրքերը այս ցուցակից, որոնց թարգմանութիւնները կան հայերէն, ապա թէ ոչ ինչ միտք ունի այս գրքի հրատարակումն. Այլ միայն այդ չէ արուած, այլ թարգմանութիւնն էլ այնպէս ստրիգրէն է կատարուած, որ կարգացողը չէ կարող յատուկ անունների հայերէն ձևերն ճանաչել, Այս ցուցակը պէտք կը գայ այն հայերին, որոնք կը կամենան ուսերէն կարդալ. Լեզուն անմշակ է, օր. ինչ կը նշանակէ « ղուրան (հատուածների մէջ) » աւելի լաւ չէր լինել ուսերէն գրել այդ ցուցմունքը և կարգացողը կը հասկանար, որ հեղինակը առաջարկում է ղուրանից հատուածներ կարդալ. Ար հայը կը հասկնայ թէ ինչ կը նշանակէ. « նրանց կ'կարգան նրանք », « թափանցուել ենք նրա գիտնական սկզբունքով և ինչ, Եւրոպական անունները պէտք էր ճիշդ տառագրուել, Բրունզիլդա—Բրունզիլդա—Վրիմզիլդա—Վրիմզիլդա—Մազաբարատա—Մահաբարատա, Աւլիս—Արիս ևս ևն. »

Ն. Բ.

Ա Ձ Դ.

Յայտնում ենք հայ հրատարակիչներին, որ Խմբագրութիւնս իւր ստացած գրքերի մասին միշտ զեկուցումներ է տպագրում: